ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԸ ՓԱՐԻԶԻ ՓԵՌ-ԼԱՇԵԶԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆԸ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԵՐՈՍ ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԳԵՐԵԶՄԱՆԻ ՎՐԱ ԾՆՆԴՅԱՆ ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Անդրանի՛կ, քա՛ջ վավակ հայ ժողովուրդի, դո՛ւն՝ ապատության կինվոր, դուն՝ արդար բավուկ, դուն՝ պաշտպան հավատո և հայրենյաց, դուն՝ մեր պատմության բարայրներեն լույս աշխարհ եկած նոր օրերու Մեր. ահավասիկ Ես, Հայոց Հայրապետը, քեզի կու գամ Ս. Էջմիածնեն, Հայոց աշխարհեն, և քեզի ողջույն կբերեմ:

Կբերեմ քեզի նաև վկայությունը, թե վերածնած մեր Մայր Հայրենիքին մեջ, քու հոգիդ կսավառնի իբրև արծիվ, Հայաստանի սարերուն և ձորերուն վերև: Եվ մանավանդ այս օրերուն, երբ ապգովին ծունկի եկած պիտի աղոթենք մոտ երկու միլիոն մեր նահատակներու հոգիներուն խաղաղության համար, նաև հայրենիքի քու եղբայրներուդ, քույրերուդ և վավակներուդ հայացքները դեպի քեզի են ուղղված հարգանքով, երախտագիտությամբ, ուխտդ իրենց սրտերուն մեջ ամուր պահած:

Հայրենիքեն ափ մը հող ես չբերի հետս գերեզմանիդ, վասնզի հոգիս կվկայե, թե հեռու չէ այն օրը, երբ ինքը հայրենի հողը իր կուրծքը պիտի բանա և ընդունի աճյուններդ, ուր դուն պիտի հանգչիս հավիտյան:

Անդրանի՛կ, քա՛ջ վավակ Մեր, օրհնությո՛ւն քու հիշատակիդ. օրհնությո՛ւն քու կատարած գործիդ. օրհնությո՛ւն կես թողած գործիդ: Եվ Ամենայն Հայոց Հայրապետին սրտեն ջերմեռանդ մաղթանք Իր ժողովուրդին՝ քու մեծ գործդ հասցնելու իր լրումին...:

ՎԱՉԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ

Փարիզ,
Գեռ-Լաշեզի գերեզմանատուն,
4 փետրվար 1965: